

զգիրկս տասն, այնպէս մինչ երկու մարդ մտնալ ի ներքս ի միասին գնան եւ ձգեցին զջուրն ի ներքս եւ բերին ի ջրաղացն(1)։ բայց զանճանելի նեղութիւն եւ զանբաւելի ծախսն, որ ի վերայ եղեւ ոչ գոյ թիւ եւ ոչ համար։ եւ յետոյ այս վարդապետն եղեւ գլուխ ազգին Ֆրանկաց եւ եկն ի վերայ թուրքին, յորոյ աւուրսն եր վնիլ Վարազայ խոնայ Փիրումն եւ աւագ երեց Տեր Մինասն։ եւ վերակացու գործոյն Զմեկայ Տեր Աւետիսն։ որ եղեւ յետոյ արհի եպիսկոպոս եւ գործակալ սուրբ էջմիածնայ։ այլ զխարհն Ալթունենց խոնայ Մարխասն հոգաց» (Դիւան Հայոց Պատմութեան, Ժ. Կ. տ. էջ 105(2) և Խ. Լեւոնեան Բիւզանդիոն, Թ. 1930)։

Այս յիշատակարանէն որոշ է, թէ Կ. Պոլսոյ նախկին պատրիարք Յովհաննէս Թիւթիւնճի 1669ին Վանայ առաջնորդ էր և իր իրաւաստութեան տակ ունէր ո՛չ միայն Սալնապատի վանքը և Հոգեոց վանքը, այլ եղած էր նաև Աղթամարի կաթողիկոս։

Սակայն գրուածէն այնպէս կը հասկցուի, թէ Յովհաննէս եպ. 1669ին այլեւս Աղթամարի կաթողիկոս չէր, վասնզի այս կարգին յիշատակարանը կ'ըսէ. «յետոյ այս վարդապետն եղեւ գլուխ ազգին Ֆրանկաց եւ եկն ի վերայ թուրքին», ինչ որ ո՛չ առաջնորդ և ո՛չ ալ կաթողիկոս եղած ատեն կրնայ եղած բլլալ։

Հ. Ներսէս Վ. Ակինեան, որ ուսումնասիրած է Աղթամարայ կաթողիկոսներու պատմութիւնը (Գաւազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, էջ 140), որոշ

---

(1) Այս առուին հետքեր մինչեւ այս դարուն սկիզբը կը նշմարուէին (Խ. Լեւոնեան, Բիւզանդիոն, ք. 1198)։

(2) Ոսկիւ առնուած է «Անցք Վասպուրական Աշխարհի» անուն տետրակէ մը, զոր ժամանակին Փիղալէմեան վրդ. ընդօրինակած է Վանի նորաէն եկեղեցիի Միքայէլ փոխմայէն առնելով։